№ 94 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՄԱՅԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՄԱՅԻՍԻ № 94

ეროვნული ბიბლიოთეკა

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամէն օր առ. ժամը 9-ից մինչեւ 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Յայտարարութիւններն ընդունւում են ամէն լեզուով առաջին երեսում 1 ռուբ., իսկ վերջին երեսում՝ 75 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 25 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչեւ ժամը 2-ը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ“-ի խմբագրութեան նոր բնակարան տեղափոխուելու պատճառով, այսօր թերթը լոյս է տեսնում կէս ծաւալով։ Խմբագրութեան եւ գրասենեակի նոր հասցէն՝ **Гановская ул., д. № 3.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐ. ՊԵՏ. ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Յայտարարում է ի գիտութիւն Կարսի շրջանի գաղթականների, որ գաղթականական երկրորդ գնացքը դէպի Կարս մեկնում է այսօր, առաւօտեան ժամը 9-ին Նաւթլուղ կայարանից։ Գնացք մտնել կարելի է միմիայն Կարսի Հայրենակցական Միութեան միջոցով Ներկայացչութիւնից ստացած տոմսերով։ 1—1

«ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ՎԻՃԱԿԸ

«Մշակի» աշխատակիցների, բաժանորդների, թղթակիցների և գոյութեան ու յարատեւութեան նախանձախնդիրները չարունակ դիմում են ինձ և մեղադրում, որ ես հանդիսատես եմ «Մշակի» կարծէք թէ մահուան։

Բարոյական պարտք եմ համարում ինձ դիմողներին հրաւիրել առաջիկայ ուրբաթ, ներկայ մայիսի 9-ին, երեկոյեան 7 ժ. շնորհ բերել Գրական-Գեղարուեստական Սալոնը, ուր հերթական երեկոյթը յատկացնում եմ բացառապէս «Մշակին», այն լրագրին, որ քառասուն տարի բացի աշխատակցելուց, ժամանակաւորապէս խմբագրելուց՝ աջակցել եմ «Մշակին» նրա բոլոր թշուառ օրերին, թէ Գրիգոր Արծրունու կենդանութեան ժամանակ, նրա քարւանատան վաճառուած օրից, թէ Գր. Արծրունու Շվեյցարիայից վերադառնալուց, «Մշակը վերսկսելու օրից և ապա նրա ճգնաժամին՝ Գր. Արծրունու յոբելեանը նախաձեռնելով և լինելով իբրև նախագահ յոբելեանական յանձնաժողովի, ապա մահուանը, թաղման տնօրէններից մէկը, «Մշակ»-ի № №-ը լոյս ընծայող, երբ աշխատակիցները թաղումից յետոյ բանտումն էին և ապա «Մշակ»-ին մերձաւոր մինչեւ Հ. Առաքելեանի թաղումի վերջացնելը։

Պահանջում եմ «Մշակ»-ի ուղղութեան այժմեան տէրերից բերել այդ երեկոյին և իմ այն գրուածքը, որ տուել էի «Մշակ»-ին՝ «Հ. Առաքելեանի վերջին օրը», և որը չէին բարեհաճել տպագրելու։

Մանրամասնութիւններն ուրբաթ երեկոյեան Գրական-Գեղարուեստական Սալոնի հերթական երեկոյթին։ Հետաքրքրուողների համար մուտքն այդ երեկոյ ազատ է։

Տ. Նազարեան

ՄԱՄՈՒԼ

«Սոցիալ-Դեմոկրատ» շաբաթաթերթը պարզապէս փոխել է իր երեսը և դարձել է զուտ բոլշեւիկական օրգան։ Իր վերջին համարի առաջնորդողում լրագիրը պնդելով, որ սոցիալիզմը այժմ մեզ համար ոչ թէ հեռաւոր իդէալ է, այլ «օրուայ հարցը», ուստի հրաւիրում է պրոլետարիատին «ուժով» խլելու իշխանութիւնը բուրժուազիայի ձեռքից։ Պէտք է լինել անխնայ բուրժուազիայի հանդէպ, որովհետեւ ինչքան մօտ ենք յաղթութեան, այնքան աւելի կռիւը կատաղի է դառնում։ Որպէսզի յաղթութիւն տանենք, հարկաւոր է ամբողջ աշխարհի բանուորների ուժեղ կազմակերպութիւն, հարկաւոր են միացեալ, երկաթէ կամք, միացեալ յեղափոխական, սոցիալական ճակատ՝ Խորհրդային Իշխանութեան գլխաւորութեամբ։

Այդ է մեր մայիսի մէկի տօնի լոզունգը։ Դրանով մենք դիմում ենք բոլոր բանուորներին, կոչ ենք անում միանալ յեղափոխական սոցիալիզմի կարմիր դրօշակի շուրջը, այն դրօշակի՝ որը ներկուած է բանուորների կարմիր արիւնով, և որը ներկայացնում է սոցիալիզմի փայլուն յաղթանակը։

Փառք Աստծու, այժմեանից ուրեմն ռուս բոլշեւիկներն էլ կունենան մեր քաղաքում իրենց օֆֆիցիոզը.... Թէ չէ առանց բոլշեւիկների հիստերիկական աղաղակի և նրանց հիւանդոտ ցնորքների Թիֆլիսը մեծ քաղաքի նման չէր լինի։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐՈՒՄ

Կամաւորական բանակի գերագոյն հրամանատարութիւնը որոշեց զէնքի տակ կանչել բոլոր հայերին, որոնք ներկայումս ապրում են նրա հողամասի վրայ, առանց հպատակութեան խտրութեան։ Այդ կարգադրութիւնը մեծ վրդովմունք առաջ բերեց թէ հայ հպատակների և թէ հայ փախստականների մէջ։ (Հայկ. տեղ. բիւրօ)։

ՄՈՒՐՄԱՆՈՒՄ

Հիւսիսային Ռուսաստանի անգլիական հրամանատարութիւնից ստացուած է պաշտօնական հաղորդագրութիւն այն մասին, թէ Մուրմանի չինացի բանուորների անկարգութիւնները վերջացած են։ Ապրիլի 7-ին անկարգութիւն անողներից մեծ մասը ձերբակալուած են։ Սեգոյից հարաւ երկու յարձակում վանուած է։ Հիւսիսային ռուսական զօրքերը գրաւեցին Վիգոզերօ լճի մօտ գտնուած Գարնովոլսկը, գերի վերցնելով բոլշեւիկների պահակը։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Պարիզից հաղորդում են, որ կոնֆերանսը միաձայն որոշեց տալ Բելգիային արեւելեան Աֆրիկայի Ռուանդա և Ուրունդա նահանգները։

ՍԻԲԻՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Օմսկից հաղորդում են պաշտօնապէս, թէ Կոլչակի զօրքերը Վեատկայի ուղղութեամբ յետ մղեցին յարձակումը։ Շատ յաջող են Սոլիկամսկի տակ եղած գործողութիւնները, Ուֆայից 80 մղոն հեռու, ուր վերցրած են շատ դաշտային թնդանօթներ և գերիներ։

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կ. Պոլսի քաղդէական և ասորական համայնքները մշակել են մի գեկուցում՝ ներկայացնելու Կ. Պոլսի Դաշնակից պետութիւնների կոմիսարներին, որի մէջ արձանագրում են ասորիների պահանջները։

ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Հիւսիսային Ռուսաստանի բրիտանական հրամանատարութիւ[illegible] հաղորդագրութիւն է սա[illegible]ծ այն մասին, թէ Ար[illegible]սկի ճակատի վրայ, երկ[illegible]ու գծով, սպասւում է բ[illegible]ու արշաւանք։

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Կամաւորական բանակի այն մասերը, որոնք կռւում էին բոլշեւիկների դէմ Հիւսիսային Կովկասում, անցան դէպի արեւելք և պաշտպանողական դիրք ընդունեցին։ Դենիկինի բանակը, Դոնի ճակատում, գործում է փոփոխակի յաջողութեամբ։ Աւելի ամուր է Կուբանի կամաւորական բանակի դրութիւնը, ուր կենտրոնացած է հակայեղափոխական սպայութիւնը և որը հետեւում է սահմանադրական միապետութեանը։ Այդ սպայութիւնը մեծ անբաւականութիւն պատճառեց դեմոկրատիկ շրջաններում և պատճառ եղաւ Կամաւորական բանակի Դոնի ճակատի անյաջողութիւնների։ Հաւաստի աղբիւրներից երեւում է, որ Կոլչակը, որի հետ կապ է հաստատուած դենիկինցիների կողմից, հրամանագրել է զսպել Կուբանի սպայութեանը։ Դրա հետեւանքն այն եղաւ, որ կամաւորական բանակի զօրամասերի մի քանի հրամանատարներ հեռացուեցին։ Սպասւում է Դենիկինի դեկլարացիան Սահմանադիր Ժողովը ճանաչելու, գիւղացիներին հող տալու, ֆեդերատիւ հանրապետութեան ճանաչման և 8 ժամեայ բանուորական օրուայ վերաբերութեամբ։ Դենիկինի բանակի կազմի մէջ մտնում են սպայութիւնը և Դոնի, Կուբանի և Թերեքի կոզակութիւնը։ Կոլչակի յաջողութիւնները բացատրւում են նրանով, որ նա Սիբիրից ստացել է հաց և ոսկու վալիւտայի պաշար ունի։

Դաշնակից հրամանատարութիւնը բռնել է Կասպից ծովի արեւմտեան ափերը և պաշարել է Աստրախանի նաւահանգիստը։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

ԼՈՆԴՈՆ.—Պարիզից հաղորդում են, որ Բելգիայի արտաքին գործերի նախարարը յայտարարեց յանձնաժողով կազմել Օրլանդոյից, Մակինից, Խաուսից և Սմուտսից և քննել Բրիւսելը Ժողովուրդների Լիգայի բնակավայր դարձնելու առաջարկը։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՆԳՍՏԱՑԵԼ Է

ՓԱՐԻԶ.—Հաւաս գործակալութեան հաղորդագրութեան համաձայն, գերմանական լրագրողները Սպայում պայմանագիրը ստորագրելուց յետոյ յայտնեցին, թէ ձեռնարկած միջոցները հանգստացրել են գերմանական ժողովրդին։

ՑՈՅՑԵՐ ՊԱՐԻԶՈՒՄ

ԼՈՆԴՈՆ, 7 ապրիլի։ Սոցիալիստները վրդովուած են Ժորեսի մարդասպանի արդարացման համար և այդ պատճառով բողոքի ցոյցեր կազմեցին դատավճռի դէմ, այլ և նրա համար, որպէսզի արտայայտեն իրենց յարգանքը դէպի Ժորեսի յիշատակը։ Թափորին մասնակից էին Բրանտինգը և Վանդերվելդեն։ Թափորը միջազգային երգեր երգելով գնաց դէպի Ժորեսի տունը, ուր մի պսակ յանձնեց կնոջը։ Ժողովրդի խումբը նայում էր ցուցարարներին, որը անցնում էր մեծ խաղաղութեամբ, մինչեւ որ անիշխանականների մի խումբ պարզեց սև դրօշակ։ Ոստիկանութիւնը խառնուեց և տեղի ունեցաւ ընդհարում, որի ժամանակ վիրաւորուեցան մի քանի ոստիկաններ

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Ցոյցեր Պարիզում։
Հայերի զինակոչը Եկատերինոդարում։
Սիբիրի ճակատը։
Ռուսաստանում։
Իտալիայի դրութիւնը Կոնֆերանսում։

ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԻ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԵԼԸ

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ։ Շտուտգարդից հաղորդում են, որ սպարտակեանների ընդհանուր գործադուլը վերջացաւ անյաջողութեամբ։ Առաջնորդները ձերբակալուեցան և կառավարութիւնը դրութեան տէրն է։ Ստոկհոլմից հեռագրով հաղորդում են, որ արեւելեան Ուկրայնայում խորհրդային զօրքերը 100-ական մարդով անձնատուր են լինում ուկրայնացիներին։

ԴՐՕՇԱԿԻ ԻՋԵՑՆԵԼԸ

Ադմիրալ Բեզին այսօր իջեցնում է իր դրօշակը, ինչպէս մեծ նաւատորմիղի գլխաւոր հրամանատար, որպիսին արձակւում է։ Բոլոր լրագիրները այդ առթիւ յօդուածներ են նուիրում, որով ցոյց են տալիս թէ նաւատորմիղի նպատակը որքան իրագործուած է, որովհետեւ գերմանական զինուորածովային ուժերը վերջնականապէս ոչնչացրած են։ Նրանք Ջելլիկոյին ընդունում են ինչպէս մեծ կազմակերպիչ և առաջնորդ, իսկ Բիտին որպէս նշանաւոր ռազմագէտ։

ԿՌԻՒ ՊԵՏՐՈՎՍԿՈՒՄ

Բագւում ստացուած վերջին լուրերի համաձայն, լեռնականների և գեներալ Պրժեւալսկու զօրքերի մէջ կռիւ է տեղի ունեցել։ Հետեւանքի մասին առայժմ տեղեկութիւններ չկան։ («Искра»)

ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻ ՆՈՐ ՊԱՀԱՆՋԸ

Անգլիական փոխադրող բանուորները պահանջում են շաբաթուայ մէջ 44 ժամեայ աշխատանք և վարձի 20 տոկոս յաւելումն, սպառնալով հակառակ դէպքում գործադուլ անել։ («Искра»)

ԲՈԼՇԵՒԻԿԱԿԱՆ ԼՐԱԳՐՆԵՐ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Անգլիական լրագրերի տեղեկութիւնների համաձայն, վերջերս Անգլիայում սկսել են հրատարակուել բոլշեւիկական լրագիրներ, որոնք բանուորական շրջաններում խլրտում են առաջ բերել։ («Искра»)

ՍԵՐԲԻԱՅԻ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԸ

Սերբիայում սկսուել են գործադուլներ, որոնք չեն վերջանում։ Մի քանի բանուորական կազմակերպութիւններ գործադուլ յայտարարելով, իրենց համակրութիւնն են յայտնում Հունգարիայում սկսուած սոցիալական շարժմանը։ («Искра»)

ՄԵՌՆՈՂ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Խորհրդային իշխանութիւնը պաշտօնական կերպով յայտարարում է, որ վառելիքի բացակայութեան պատճառով Պետրոգրադում փակուել են երեսուն հինգ գործարաններ, ի թիւս որոնց Այվազ, Վուլկան, Ֆրենկօ, Ռուսական մեքենագործական գործարանները և ուրիշ շատ շատերը։

ԱԼԲԱՆԱՑԻՆԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Տաճկական ալբանացիների ազգային միութիւնը հրատարակել է մի կոչ, որի մէջ յայտնում է, որ այլեւս ոչ մի կապ չունի Էսադ փաշայի հետ և Թուրխան փաշային ընդունում է միակ անձնաւորութիւնը, որը իրաւունք ունի ալբանական կառավարութեան անունից հանդէս գալ։

ՍԱՀԱՐԱՅԻ ՎՐԱՅՈՎ

Ալժիրից հաղորդում են, որ այնտեղ է վերադարձել գեն. յունուար ամսից այնտեղից դուրս գնացած զինուորական արշաւախումբը, անցնելով աւելի քան 3000 վերստ։ Արշաւախմբի կազմի մէջ կան 14 [illegible] և 5 աւտոմոբիլ, որոնք ունեն գնդացիրներ։ Արշաւախումբը անցել է մօտ 1000 վերստ անբնակ վայրերով, առանց ճանապարհների հաղորդակցութեան և անցել է ամբողջ Սահարա անապատը։

ՍՈՎՆԱՐԿՈՄԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Սովնարկոմը (Ժող. կոմիսարների Խորհուրդը) մի նո-

874/15
20216
3.20 b

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 7 մայիսի

ՀԱՅԵՐԻ ԶՕՐԱԿՈՉԸ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Բագուի հայկական ինֆորմացիոն բիւրօն հաղորդում է, որ կամաւորական Բանակի բարձր հրամանատարութիւնը զէնքի է կանչել Հիւսիսային Կովկասում և Դոնի շրջանում ապրող բոլոր հայերին, նրանց թւում և հայ գաղթականներին։ Այս հանգամանքն այնքան կարեւոր քաղաքական նշանակութիւն ունի, որ նրա վրայ պէտք է ուշադրութիւն դարձնեն թէ մեր հասարակական կարծիքը և թէ Հայաստանի Կառավարութիւնը։

Կանգնած լինելով Հայաստանի հանրապետութեան անկախութեան տեսակէտի վրայ, մենք համարում ենք Դենիկինի պայքարը բոլշեւիկների դէմ ներքին ռուսական գործ, որքան որ կռուող կողմերից ոչ մէկը չի սպառնում մեր անկախութեան։ Հիւսիսային Կովկասում ապրում են բացի տեղացի հայերից և մեծ քանակութեամբ հայեր, որոնք պէտք է համարուեն Հայաստանի հանրապետութեան հպատակներ։ Գեն. Դենիկինը կարող է զօրակոչի ենթարկել միայն տեղացի ռուսահպատակ հայերին, մինչդեռ նա այդ իրաւունքը չունի հայկական հպատակների և մանաւանդ տասնեակ հազարների հասնող Թիւրքահայ գաղթականների վերաբերմամբ, որոնք երբէք ռուսահպատակ չեն եղել։ Հիւսիսային Կովկասի տարագիր հայերը պէտք է լաւ հասկանան, որ նրանց մասնակցութիւնը բոլշեւիկների դէմ եղած կռւում ոչ մի օգուտ չի կարող տալ հայ ժողովրդին և Հայաստանին, մինչդեռ ծանր հետեւանքներ կարող է ունենալ իրենց համար։ Բոլշեւիկների յաջողութեան դէպքում, կարմիր գւարդիականները թալանի և ջարդի կմատնեն այնտեղի հայերին, եթէ իմանան որ «АВТОНОМЧИКЪ»-ները, ինչպէս նրանք անուանում են հայերին, գործում էին Դենիկինի հետ միասին։

Դենիկինի այս կարգադրութեան վրայ լուրջ ուշադրութիւն պէտք դարձնի հայկական արտաքին գործերի մինիստրութիւնը։ Եթէ նրա քաղաքականութեան հիմնական գծերն են կազմում Անդրկովկասեան ժողովուրդների անկախութիւնը և նրանց համերաշխութիւնը, եթէ նա իր համակրութիւնն էր յայտնել լեռնականներին, որոնք օրհասական պայքար են մղում իրենց ազատութեան համար, ապա նա չպէտք թոյլ տայ, որ Հայաստանի հպատակները մի երրորդ ուժի կողմից գործ ածուեն այնպիսի նպատակների համար, որոնք միանգամայն հակասում են իր քաղաքականութեան կուրսին։ Արտաքին գործերի մինիստրութիւնը պէտք ամեն կերպ աշխատի զերծ պահել զօրակոչից Հիւսիսային Կովկասում ապրող հայերին։ Առանց այն էլ մեր ժողովուրդը արիւնաքամ է դարձել, նա չի կարող տալ նոր զոհեր յանուն այնպիսի նպատակի, որը ոչ մի առնչութիւն չունի այժմ հայ ազգի և Հայաստանի շահերի հետ։

Ինչպէս երեւում է, Կամաւորական բանակի հրամանատարութեան շրջանում սխալ ըմբռնողութիւն ունեն Անդրկովկասեան հայերի քաղաքական տրամադրութեան մասին, որի հետեւանքը պէտք համարել ներկայ զօրակոչը։ Հայկական արտաքին գործերի մինիստրութիւնը իր դիպլոմատիկական ներկայացուցչի միջոցով պէտք պարզի առաջուայ մեր «տէրերին», որ նախկին Ռուսա-Հայաստանի հայերը ցանկանում են լինել անկախ և միանալ իրենց Թիւրքահայ եղբայրների հետ, որ նրանք ամենեւին չեն ցանկանում վերականգնուած տեսնել Անդրկովկասում ռուսական հին կարգերը։ Պէտք է պարզել, որ սխալ է Կամաւորական բանակում տիրող այն կարծիքը, թէ «հայկական դիվիզիան՝ Կամաւորական բանակի 7-րդ դիվիզիան է»։ հայկական զօրքերը կոչուած են պաշտպանելու միմիայն հայ ժողովրդի շահերը և ոչ մի կառավարութիւն չի կարող նրանց ծառայեցնել ուրիշ նպատակների համար և որքան շուտ ցրուի մի քանի ռուսացած և միայն ծագումով հայ զինուորականների կողմից տարածուած այս կարծիքը, այնքան լաւ։

Հայաստանի Կառավարութիւնը պէտք անմիջապէս անհրաժեշտ միջոցներ ձեռք առնի ազատելու համար գեն. Դենիկինի յայտարարուած զօրակոչից հայկական հպատակներին և միենոյն ժամանակ աշխատի Հայաստան փոխադրել Հիւսիսային Կովկասում թափառող բազմահազար գաղթականութիւնը։

տայով դիմել է Դաշնակիցներին, պահանջելով վերադարձնել Օդեսայի նաւահանգստում գրաւած 112 փոխադրանաւերը։

Բացի դրանից Սոմարկոմը դիմել է Դաշնակից նաւատորմի հրամանատարին, առաջարկելով թողնել Օդեսայի նաւահանգիստը և քաղաքի նաւապաշարումը վերցնել։ Նրան պատասխանել են, թէ ծովերը բոլորի համար ազատ են և ոչ ոք չէ կարող արգելել լողալ։ Երբ Սոմարկոմը պահանջել է, որ հենց այդ սկզբունքի հիման վրայ բոլշեւիկեան նաւերին եւս թոյլ տրուի ծովը դուրս գալ և ազատ լողալ, Դաշնակիցներից մերժողական պատասխան է ստացել։

(«Искра»)

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Լեռնականների հանրապետութեան ներքին գործերի մինիստր Կոցեւի մի շրջաբերական հրամանից, որ ուղղուած է նահանգապետներին ու գաւառապետներին, երեւում է, որ ամբողջ երկրում ծայր է տուել անարխիա, կողոպուտ, աւազակութիւն և այլն, որի դէմ մաքառելու հնարաւորութիւն չունի իշխանութիւնը։

Մինիստրը այս բոլորի առաջն առնելու համար յիշեալ շրջաբերականով պահանջում է նահանգապետներից և գաւառապետներից՝ ամենախիստ միջոցներ ձեռք առնել գողերի ու աւազակների դէմ, նրանց դէմ գործ դնելով ամենախիստ պատիժներ, մինչև անգամ թոյլ տալով տեղն ու տեղը սպանել, եթէ յանցանքը ապացուցւում է իրական փաստերով։

(«Искра»)

ՀՐԷԱՆԵՐԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՍԼԱՒՈՆԻԱՅՈՒՄ

Լիւբլինի «Народная Управа» թերթը պաշտօնական կերպով հաղորդում է, որ Հարաւային Սլաւոնիայի կառավարութիւնը վճռել է երկրից հեռացնել բոլոր հունգարներին և հրէաներին։

ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՐԵՆԱՒՈՐՈՒՄԸ

Ամերիկական պարենաւորման գործակալները յայտնում են, որ մօտիկ ապագայում մթերքների գները ոչ միայն չեն էժանանալ, այլ նոյնիսկ կը թանգանան, որովհետև Ամերիկայում ստացուած տեղեկութիւնների համաձայն՝ Գերմանիան, Աւստրիան, Հունգարիան, Լեհաստանը, Իտալիան, Հարաւային Սլաւոնիան, Բալկանեան տէրութիւնները՝ օրինակ Ռումինիան և Թիւրքիան, Ֆինլանդիան, Սիբիրը և Հիւսիսային Ռուսաստանը դեռ եւս մի ամբողջ տարի պարենաւորման սուր կարիք ունեն։

ԿԱՐՍԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ

Արփաչայ—Սարիղամիշ գծի լիազօր ինժեներ Փիրումեանը հայկական երկաթուղիների Վրաստանի ներկայացուցիչ ինժեներ Խատիսեանին հեռագրում է հետեւեալը.

«Անգլիական հրամանատարութեան համաձայնութեամբ Արփաչայ—Սարիղամիշ երկաթուղագծի շահագործումն անցնում է Հայաստանի երկաթուղիների վարչութեան մայիսի երկուսին ժամի 12-ին։

Անգլիական զինուորական տարանքները, էշելոնները և արտակարգ գնացքներն ուղեւորւում են անգլիական հրամանատարութեան ներկայացուցիչների նարեադներով։ Հաստատւում են տոմսակների վաճառումն և բագաժի ընդունելութիւն։

Հայաստանի երկաթուղիների կառավարիչը մայիսի 4-ին հեռագրում է Վրաստանի և Հայաստանի կառավարութեան դիւանագիտական ներկայացուցչին.

«Սոյն մայիսի 4-ին Կարսի գծի վրայ մինչև Սարիղամիշ բացւում է գնացքների ժամանակաւոր երթեւեկութիւն հանդերձ ճանապարհորդների և բագաժի ընդունելութեամբ՝ յատուկ ցուցակով. արագութիւնը մի ժամում 15 վերստից աւելի չի լինի։ Տոմսակները կը վաճառուեն Կարսի գծից մինչև Ալէքսանդրապոլի կայարանը և գլխաւոր գիծը, միայն Ալէքսանդրապոլից մինչև Կարս-Սարիղամիշ գնացքները դուրս գնալուց առաջ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴ.

Իտալիայի դրութիւնը

Ի նկատի ունենալով որ Իտալիան չէ ուզում մասնակցութիւն ունենալ խաղաղարար կոնֆերանսի պայմանագրի ստորագրութեան մէջ, հարց ծագեց Իտալիայի մասին, որպէս հինգ մեծ պետութիւններից մէկը։ Պետութիւնների մէջ իր դիրքը պահպանելու համար՝ Իտալիան ստիպուած է խաղաղարար կոնֆերանսում իր նախկին դիրքը գրաւել։ Խաղաղարար պայմանագրի մէջ կայ մի կէտ հինգ մեծ պետութիւնների մասին, ինչպէս շատ հարցերի բարձրագոյն մի հեղինակաւոր մարմին, և Իտալիայի խուսափման դէպքում պէտք է այդ կէտը փոխուէր, որովհետեւ մնում էին չորս մեծ պետութիւններ։

Գերմանական զօրքերի բաժանումը այն հարցերից մէկն է, որպիսին Իտալիային զրկում է ձայնի իրաւունքից նրա խուսափման դէպքում։ Պայմանագիրը արդէն տպագրւում է, բացառութեամբ մի քանի մանրամասնութիւնների, որոնք կը քննուեն երբ լիակատար պայմանագիրը տպագրութիւնից լոյս կը տեսնի։ Որովհետեւ Իտալիայի դրութիւնը պարզուած չէ, այդ պատճառով պայմանագրի բնագիրը պատրաստուեց երկու տեսակ՝ մէկը առանց Իտալիայի, միւսը Իտալիայի հետ։ Այդ երկու ձեւերն էլ, ինչպէս և պայմանագրի բնագիրը, կտպուի վաղը։

Ժողովրդական Լիգայի ներկայացուցիչները

Ժողովուրդների Լիգայի Գործադիր Կոմիտէի առաջին նիստը տեղի կունենայ վաղը։ Նախագահ Վիլսոնը կամ Հաուզը կը լինի Միացեալ Նահանգների ներկայացուցիչը։ Սեսիլը Անգլիայի, Պիշոնը—Ֆրանսիայի, Վենիզելոսը—Յունաստանի, Սպանական դեսպանը—Սպանիայի, Պեսոան—Բրազիլիայի. Իտալիան չունի ներկայացուցիչ։

Պատուիրակների հրաւիրելը

Աւստրիայի հետ բանակցութիւն ունենալու ժամանակամիջոցը նշանակուած է գերմանացիներին պայմանագիրը յանձնելուց անմիջապէս յետոյ, որի մասին կը հաղորդուի Իտալիային։ Ենթադրում են, որ աւստրիացիք կը ժամանեն մայիսի կէսին։ Այնուհետեւ տեղի կունենան Բուլղարիայի և Տաճկաստանի պայմանագրերը, սակայն նրանց պատուիրակների հրաւիրելու ժամանակամիջոցը չէ նշանակած։

Դրամների փոխադրութիւնը

ԼԻՈՆ, 4 մայիսի.—Ցիւրիխից ստացուած տեղեկութիւնների համաձայն, չնայելով արգելքին, գերմանական շատ խոշոր դրամատէրեր, մանաւանդ նրանք, որոնք հարստացել են պատերազմի ժամանակ, դրամները փոխադրում են դէպի արտասահման։ Վերջին երկու ամսուայ ընթացքում 35 միլիարդ մարկ դրուած են շվէյցարիայի զանազան բանկերում։

Բարոն Ֆոն Եագովի յայտնութիւններ

Արտաքին գործերի նախկին ստատս-քարտուղար բարոն ֆոն Եագովը յայտարարեց պատերազմի ծագման պատճառների մասին։ Նա ընդունեց ստատս-քարտուղարի պաշտօնը նպատակով և Վիլհելմ կայսեր հաւանութեամբ և այն գերմանական շահերի նկատմամբ, ինչպէս այդ տեղի ունէր դեռ Բիսմարկի, Բիզմանֆելդի, Ջիմբերլանի, Սլիսբորի և Լանդսդոնի ժամանակ։ Տաճկաստանի սահմանների գերման-անգլիական համաձայնութիւնը, նրա տնտեսական շահերի շրջանում, մօտ էր իր վախճանին 1914 թ. ամրան վերջին, և նա կարող էր նախազգուշացնել խաղաղութեան խախտումը, սակայն դա ընդհատուեց Բալկաններում ծագած դէպքերի պատճառով։ Աւստրիայի և Սերբիայի մէջ ծագած վէճի հենց առաջին օրերից Գերմանիան խորհուրդ էր տալիս Վիէննային պահել չափաւոր տոն և Աւստրիայի Սերբիային տրուած յուշագրից յետոյ, որպիսին Բեռլինում ընդունեցին շատ խիստ ձեւով, Գերմանիան մինչև վերջին րոպէները ձգնում էր չէզոքացնել այդ վէճը։ Սակայն Սազոնովը յուլիսի 29ին յայտնեց աւստրիական դեսպանին, թէ ներկայ դէպքում Սերբիայի շահերը համարւում են նաև ռուսական։ Գրէյն Գերմանիայի պահանջներին որպէս պատասխան, որ Անգլիան պէտք է յետ պահի Պետրոգրադին, պատասխանեց, որ դա բոլորովին հնարաւոր չէ։

Ֆրանսիական արտաքին գործերի նախարար Վիվիանին դրութեան մասին հաղորդելով Պուանկարէին, հաստատում է, որ Պարիզի գերմանական դեսպանը զուր ջանքեր էր անում համոզել ֆրանսիային հանդէս գալ Գերմանիայի հետ համերաշխութեամբ, որպէսզի ազդի Ռուսաստանին խաղաղութիւնը պահպանելու համար։ Ֆրանսիական Պետրոգրադի դեսպանը, ինչպէս այդ մասին հաղորդում էր գերմանական դեսպան գրաֆ Պուրտալէսին, խորհուրդներ էր կազմում Գերմանիայի դէմ։ Գրէյի առաջարկութիւնը աւստրօ-սերբիական վէճը յանձնել Լոնդոնի դեսպանների կոնֆերանսին ընդունելի չէր Գերմանիայի համար, որովհետեւ այդ կոնֆերանսը օգուտ կը տար Սերբիային և ոչ Աւստրիային։ Գերմանիան կենսապէս հետաքրքրուած էր պաշտպանել Աւստրիային և Վիէննան հետեւեց Գերմանիայի խորհրդին՝ զիջելու։ Մեծ պատերազմը տեղի չունեցաւ Աւստրիայի դիրքից, այլ Ռուսաստանի ընդհանուր զօրահաւաքի պատճառով, որը ուղղուած լինելով Գերմանիայի դէմ, հնարաւորութիւն չտուեց ոչ մի համաձայնութիւն կայացնելու։ Եագովը մանրամասն քննում է Ռուսաստանի զինուորական պատրաստութիւնները... Արդէն 1913 թ. փետրուարին Ռուսաստանը նախապատրաստել էր պատերազմի։ 1914 թ. գարնանը Ռուսաստանը բոլորովին պատրաստ էր։ Զօրահաւաքի շատ գործեր արդէն կատարուած էին մինչև պաշտօնական զօրահաւաքի հրատարակելը։ Իտալիան ծածկում էր իր նախկին դաշնակիցներից Ֆրանսիայի հետ ունեցած պայմանագիրը։ Անգլիայի և Ֆրանսիայի զինուորական պայմանագրերը նոյնպէս գաղտնի էին պահւում։ Անգլիական ծովային բանակցութեան պայմանագրերը Ռուսաստանի հետ այն ձեւով էին տարւում, որ Գրէյն այդ հարցում մոլորութեան մէջ ձգեց անգլիական պարլամենտին։

Պարիզի լրագիրները հաղորդում են, որ որոշուած է պատժել նրանց, որոնք յանցաւոր են պատերազմի ծագման մէջ։

Պետրոգրադն եւ Մոսկուան դատարկւում են

Ռուսաստանից հեռագիրներ է ստացուած, ուր հաղորդւում է, որ արմատական փոփոխութիւններ են տեղի ունենում։ Կոլչակի և Իւդենիչի արշաւանքի պատճառով Պետրոգրադն ու Մոսկուան արդէն դատարկւում են։ Գործողութիւնները բոլշեւիկների դէմ ամեն տեղ յաջող են գնում։ Նաև ռումանական ճակատում հունգար բոլշեւիկները յետ են նահանջում ռումանական զօրքերի ճնշման տակ։

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Վրաստանում եղած որբանոցները. Ամերիկական կոմիտէն, որ մինչև այժմ իր օգնութիւնը հասցնում էր որբանոցներին Հայաստանի խնամատարութեան մինիստրութեան Վրաստանի ներկայացչութեան միջոցով, առաջիկայ յունիսի 1-ից այդ որբանոցները վերցնում է իր խնամատարութեան տակ։ Նա իւրաքանչիւր որբի համար ամսական յատկացրել է 360 ռ.։

◆ **Թիֆլիսում մնացած գաղթականների թիւը.**—Ներկայումս Թիֆլիսում և նրա շրջակայքում մնացել են մինչև 25,000 գաղթականներ։

◆ **Հայ գաղթականներին.**—Այսօրուանից 300-րդ վերստի վրայ գտնուող գաղթականներին բաժանելու է շնչին օրական մի ֆունտ հաց Կանադայի ալիւրից։

◆ **Ռադիոտրական կապ Լոնդոնի եւ Բագուի միջեւ.**—Բագուից եկած տեղեկութիւններից երեւում է, որ մօտ օրերս Լոնդոնից այնտեղ է եկել անգլիական մի յայտնի ընկերութեան ներկայացուցիչ, որ դէպի Լոնդոն բամբակի սերմ և բամբակ արտահանելու մասին բանակցելու է Ադրբէջանի կառավարութեան հետ։ Վերջինս ամեն կերպ աշխատում է իր նախկին տնտեսական շուկաները—Մարսէլը, Լոնդոնը և Օդեսան վերականգնել։ Առաջին երկու շուկաների մասին լուրջ բանակցութիւններ են ընկալել։

◆ **Բաղանիքների մասին.**—Թիֆլիսի գաւառական զեմստւոն դիմել է երկրագործութեան մինիստրութեանը և խնդրել՝ իրեն յանձնել Թիֆլիսի հինգ հանքային բաղանիքների կապալառութիւնը ջեր-

ռակախօսական կայարան հիմնելու համար։

◆ **Նոր թերթ.**—Արհեստակցական միութիւնների խորհրդի խմբագրական կազմը [illegible] սոցիալական թերթի հրատարակման գործը շտապեցնելու համար։ Ենթադրւում է, որ մի ամսից յետոյ լոյս կը տեսնի թերթը, որ հրատարակուելու է ռուսերէն և վրացերէն լեզուներով։

◆ **Պաշտօնանկ արուած կոմիսար.**—Վրաստանի հանրապետութեան վարչական կազմի տեսուչ Շ. Մակլակելիձէի կարգադրութեամբ ձերբակալուած և Թիֆլիս է ուղարկուած Բորչալուի գաւառի Ղարաբաղ գիւղի կոմիսար Մաշադի Ռամազան օղլին իր պաշտօնավարութեան միջոցին զեղծում գործելու պատճառով, իսկ Թոնեթի գաւառական կոմիսարի օգնական Ծիծիաձէն արձակուել է պաշտօնից իր անգործունէութեան համար. նրա փոխարէն նշանակուած է Բոգդանովը։

◆ **Օրինագիծ.**—Վրաստանի Սահմանադիր Ժողովի զինուորական յանձնաժողովը ստացել է մի օրինագիծ հայ-վրացական պատերազմի և այլ ճակատներում եղած ընդհարումների ժամանակ վնասուած զինուորականներին նիւթական օգնութիւն հասցնելու համար։

◆ **Ֆունիկուլեօրի տրամւայի տարիֆը.**—Քաղաքային վարչութիւնը ընդունել է ֆունիկուլեօրի ընկերութեան յարուցած միջնորդութիւնը տարիֆի բարձրացման առթիւ և որոշել է հետեւեալ վճարը՝ վերելքի համար 2 ռ., իջնելու համար՝ 3 ռ. և մինչև միջին կայարանը 2 ռ., իսկ մինչև ֆունիկուլեօրի գործունէութեան վերսկսումը քաղաք. վարչութիւնը կարգադրել է քաղաքային ճարտարապետական յանձնաժողովին՝ լուրջ քննութեան ենթարկել ամբողջ ճանապարհը, տրամւայը և արգելաթիւերը։

◆ **Ձրի բաղանիքներ.**—Քաղաքային վարչութեան անցեալում բացած ձրի բաղնիքները մարտի 7-ից մինչև 31-ը յաճախել են 8027 մարդ։

◆ **Բծաւոր տիֆ.**—Զինուորա-ֆելդշերական դպրոցին կից գտնուած № 1-ին լազարէթը, որը բաղկացած է 250 մահճակալից, յատկացուած էր բծաւոր տիֆով հիւանդներին։ Լազարէթը մայիսի 15-ից փակուելու է, որովհետեւ համաճարակը զգալի կերպով պակասել է։

◆ **Վարչական մարմիններ.**—Վրաստանի հանրապետութեան վարչական մասի տեսուչ Շ. Մաղլակելիձէն մեկնեց Ախալցխայի և Ախալքալաքի գաւառները՝ վարչական մարմիններ կազմակերպելու համար։

◆ **Կարսեցիների երկրորդ գնացքը.**—Նաւթլուղի կայարանից այսօր Կարս է մեկնելու գաղթականական երկրորդ գնացքը բաղկացած 35 վագոնից։

◆ **Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը** կենտրոնական հիւանդանոցի 4-դ բարակը և 3-դ բարակի մի մասը ժամանակաւորապէս տրամադրել է Անդրկովկասեան համալսարանի բժշկական մասնաճիւղին՝ փորձնական աշխատանքի համար։

◆ **Համակովկասեան համագումար.**—Բագուի արհեստակցական միութիւնների կենտրոնական խորհուրդը որոշել է հրաւիրել համակովկասեան արհեստակցական միութիւնների համագումար։

◆ **Քաղաքային ընտրութիւններ Ալեքսանդրապոլում.**—Համաձայն Ալէքսանդրապոլից ստացուած հեռագրի, քաղաքային ընտրութիւնների հետեւանքը այս է՝ 52 տեղից Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը ստացել է 9 ձայն, էս-էրները՝ 5, Դաշնակցութիւնը՝ 38։

◆ **Սպանութիւն.**—Մայիսի 5-ին, երեկոյեան ժամը 8 և կէսին Լազարեւսկայա փողոցում սպանուել է Թիւրքահպատակ Նիկ. Արշիլովը։ Սպանողը—Հայրապետ Շահինեանը անյայտացել է և հետապնդւում է։

◆ **Գողութիւն.**—Նոյն օրը առաւօտեան ժամը 11-ին Արխանգելսկայա փող. № 24 տանն ապրող Վ. Նալաձէի բնակարանից անյայտ չարագործները տարել են 12,000 ռուբ. արժողութեամբ թանգարժէք իրեր։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

Տպարան «Մամուլ»—տնօրէններ Մ. Էփրիկեան և Ց. Մալխեան։ Լորիս-Մելիքեան փող., № 22.